

# ՄՇԱԿ

Հարեկան զինը 10 բուրլ է, կես տարվանը 6 բուրլ է:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում զրվում են միմիայն խմբագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «MSCHAK».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

## “ՄՇԱԿ” ԴՐԱՅԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն զինքով և Նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական  
ՀԵՌԱՅԱՆԱԿԱՆ: Մշակվում է 10 բուրլ է, կես տարվանը 6 բուրլ է:  
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցներին ան-  
կիւնում, Թամաշիլի տանը):  
Կայանքութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը զրվում համար պէտք է գրվում հետևեալ հաս-  
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-  
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդի կեանքի կեր-  
պարանափոխութիւնը. Նամակ վերին-Ազգութիւն-  
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ  
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՆՆ ԼՈՒ-  
ՐԵՐ.—ՀԵՌԱՅԱՆԱԿԱՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից:

### ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒԹԻՒՆԸ

Կուսի, մարտիկ այն մի շարք նախապաշար-  
մունքների և վնասակար հայեցակէտերի դէմ, ո-  
րոնք դարձել են Երկրի մեր ժողովրդի  
տիրութեան չորսուկ մտնել են մեր ժողովրդի  
մէջ, և որոնք ճշմարիտ են նրան թէ ընտանեկան  
և թէ ընկերական կեանքում,—այնքան էլ հեշտ  
չէ. հեշտ չէ, որովհետեւ այդ սխալ և վնասակար  
հայեցակէտերը կազմում են նրա հոգեկան աշխարհի

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Կ. Պոլիս, 28 յուլիսի

Ազգային երեսփոխանաց միջև բանակցութիւնը  
տեղի կունենան ֆաղաքական ժողովոյ մը ընտ-  
րութեան համար ժողովներ կը գումարեն, կը խո-  
սեն, կը վիճեն յնձ այնպէս կը թուի թէ Ազգ.  
Ժողովոյ նիստերն ըստ բաւականին փոփոխակի  
պիտի լինին: Նոր ֆաղ. ժողովոյ մը ընտրու-  
թիւնն ունի բացառիկ կարեւորութիւն մը ներկայ  
պարագայից մէջ, վասն զի նորա պաշտօնակա-  
րութեան միջոցին պիտի կատարուի անշուշտ  
Պոլսոյ նոր Պատրիարքի մը ընտրութիւնը և այդ  
ընտրութեան մէջ ֆաղ. ժողովոյ ազդեցութիւնը  
զրկելէ վնասական է:

Մասնական այդ ժողովներուն ներկայ գտնու-  
լու հրաւիրուեցայ, սակայն չուզեցի երթալ, վասն  
զի այն ամեն վէճերն ոչ կը կատարուին, այն  
ամեն խնդիրներն ոչ կը լուծուին, կրնամ ըսել  
թէ ամենն ալ տղայական են և չեն ծառայել ու-  
րիշ բանի, բայց ի՞նչ դմեղ ժամովա՞նք ընել և  
բոլոր մեր ուշադրութիւնը վրիպել օգտակար,  
կենսական հարցերէ:

Ո՛վ պիտի լինի ֆաղաքական ժողով, ո՞վ պիտի  
լինի Պատրիարք: Այս հարցումներու կրնանք պա-  
տասխանել թէ—ինչ փոյթ, ո՞վ կըլլայ թող ըլլայ,  
կիրակոս Էֆէնդին է եղեր թէ Մարկոս Էֆէնդին,  
Ամրակոմս արդարանք թէ Պողոկարպոս արդարա-  
նք: Ինչ որ մեզ համար կարեւոր է, ինչ որ մեզ  
համար անհրաժեշտ է, այդ ոչ այլ ինչ է, բայց  
եթէ դա՛նալ թէ ինչ է այն ծրագիրը—սրբօրա-  
ման—զոր պիտի գործադրեն ֆաղ. ժողով և  
Պատրիարք: Արդ մենք չունենք այդ ծրագիրը,

հիմքը, նրա աշխարհայեցողութեան զլուստը  
տարրը: Այդ աշխարհայեցողութեան մէջ որ և  
իցէ դրական փոփոխութիւն առաջ բերուի հա-  
մար, հարկաւոր է փոփոխել այն բոլորը, ինչի  
վրա որ հիմնված է ժողովրդի կեանքը, այսպէս  
ասած, գաղափարական, բարոյական կողմը: Մեր  
ժողովրդի կեանքը որ կողմը կամենաք վերցնէք,  
որ մասը կամենաք քննեցէք,—նա կարոտ է կեր-  
պարանափոխութեան:

Վերցնէք նրա ընտանեկան կեանքը—միթէ  
դժուար է նկատել, որ այն հայեցողութիւնը, որոնք  
տիրապետում են հայ ընտանիքի մէջ, միշտ կար-  
գել են կնոջը իր համար մի արժանաւայել դեր  
ձեռք բերելու, միշտ կարգել են ամուսնութեան  
հարցը կանոնաւոր հիմքերի և ազատ սկզբունք-  
ների վրա դնելու, միշտ կարգել են ընտանիքի յա-  
րաբերութիւնները մէջ հաւասարութիւն, զգուշ և  
այլն: Անցե՛ք ընտանեկան կեանքից դէպի մեր Ժո-  
ղովրդի հասարակական կեանքը,—այդտեղ աւելի  
սխալ տեսարան է ներկայանում հետաքրքրելի  
աչեքերն, ընկերական ոգու բացակայութիւնը, և

չունենք որոշ նպատակ մը, հետեւեալ մեր բոլոր  
չանքերը կը նուիրենք անձեռու խնդրոց, ինչ որ  
մեզ համար չունի ո՛ր և է հրապոյր: Այլ խնդիր է  
թէ իբր թղթակից, պարտական ենք կատարուած  
դէպքերն արձանագրել օրն օրին:

Խորիման և Ներսէս Պատրիարքներն ունէին  
ազգային ծրագիր, որ բարձր էր ամեն խնդիրնե-  
րէ: Խորիման Պատրիարք օրուան խնդիր ըրաւ  
Հայաստանի հարաւահարկութեան խնդիրն և  
յայտնեց ազգին թէ՛ ազգապէր լինելու համար  
բաւական չէ գոյել «կեցե՛ք սահմանադրութիւն»,  
այլ պէտք է նուիրել ազգին ուշադրութիւնը Հա-  
յաստանի նկրթական վիճակին, յորմէ կախում  
ունի բարոյական վիճակը: Ներսէս Պատրիարք  
չարունակեց խորիման Պատրիարքի դրո՛ն և պա-  
րագայինքն օգտուելով հոգի կերպով հրապարակ  
հանց Հայաստանի բարեկարգութեան խնդիրն:

Բուն ազգային էր այս երկու Պատրիարքներու  
գործն, հայ ազգն ըմբռնեց նոցա յարուցած խնդ-  
րոց մեծութիւնը և զօրավիզ եղաւ իւր Պատրիարք-  
ներուն: Չենք ըսել թէ խորիմանի և Ներսէսի  
ձեռնարկներն յաղորդութեամբ պատկերացան, ա-  
պա այն ազգն ուղղութիւն մը սկսաւ ունենալ, գիտ-  
ցաւ թէ իւր ջանքերն ո՞ր պէտք է ուղղուին:  
Իսկ յաջողելու համար քսան տարիներ բաւական  
չէին: Հարկաւոր տարիներու դիմած պատահար-  
ներու, աւանդութիւնների, շահերու յեղաշրջում  
մը մի քանի տարիներու մէջ ձեռք բերել կարելի  
չէր: Ի՞նչ կը մնար մեզ ընել՝ շարունակել նոյն  
ընթացքն և ապահով յաջողութիւնը մերն էր.  
համբերութիւն, աշխատութիւն, յարատեւութիւն  
մեզ պիտի պարգեւէին յաջողութիւնը, մասնաւոր  
որ մեր դիմքը շատ աւելի լաւ էր քան առաջ.  
Հայաստանի բարեկարգութեան խնդիրն եւրօպա-  
կան խնդրոց կարգն անցած էր, ինչ որ փոքր  
բան մը չէ: Իսկ Յարութիւն Պատրիարք այդ բո-  
լորը մոռցաւ. չը գիտցաւ թէ ո՞ր է ազգին շա-  
հը եւրօպայէնի վանքը կենտրոն ըրաւ ազգին

ընդհանուր շահերի չը հասկանալը կաղում են  
մեր ժողովրդի հասարակական կեանքի յատկանի-  
շը, նրա ամենաաղքէ ընկնող գոյնը: Հետաքրք-  
վեցէ՛ք նրա կրօնական-բարոյական հասկացողու-  
թիւններով—և դուք կը համոզվէք որ այդտեղ  
թաղաւորում է մի այնպիսի միջնուրդ, որի ազ-  
դեցութեան տակ քրիստոնէական ամենաբարձր և  
ամենաէական սկզբունքները խեղդել և մոռ-  
նաւ: Վերջապէս քրքրեցէ՛ք այդ կեանքի բոլոր  
միւս կողմերը, և դժուար չի լինի համոզվել, որ  
շատ յեղափոխութիւններ պէտք է անել դրա  
մէջ, որպէս զի կարելի լինի մտցնել նրա մէջ  
ընկերական կեանքի մի փոքր աւելի լայն և լու-  
սաւոր սկզբունքներ, որպէս զի կարելի լինի հա-  
նել կնոջը իր ստրկական վիճակից, չափաւորել  
ամուսնութեան մէջ մարդու անասնային իրաւունք-  
ները, և մի փոքր դիմազուլութիւն ներշնչել այդ  
կեանքի ամբողջ կաղմը մէջ, որով միայն կարելի է  
ազատել նրան այն կաշկանդող ճիւղաներից,  
որոնք արգելում են նրա կանոնաւոր աճումը:

Բայց միթէ յիշուի կարելի է մի այդպիսի յե-  
ղափոխութիւն, մի այդպիսի դիմազուլութիւն  
թաղմ հոսանք մտցնել այդ ամեն կողմից կաշ-  
կանդված կեանքի մէջ, քանի որ դարձող աղի-  
տութիւնը և մարմնացած նախապաշարմունքները  
այնպիսի հաստատ արմատ են դրել նրա մէջ, որ  
առանց արմատական միջոցների և մաքառման,  
ոչինչ չէ կարելի անել: Սակայն որոնք են այն ար-  
մատական միջոցները և մաքառումը, որ իբրեւ թէ  
այժմ գործ են դնում մեր ժողովրդի կեանքի  
մէջ մի բարոյական կերպարանափոխութիւն ա-  
ռաջ բերելու համար: Այդպիսի արմատական և  
ուղիղ նպատակին դիմող միջոցներ մեր կեանքի  
մէջ քիչ կան: Վերջինս մի քանի օրինակներ  
Ամենքն էլ գոչում են, որ խաւար նախապաշար-  
մունքները խեղդել են մեր ամբողջը, որ նրա շը-  
նորսով տանջվում է խեղճ գիւղացին թէ բարո-  
յապէս և թէ հոգեպէս, առանց հասկանալու իր  
տանջանքների պատճառը: Բայց միթէ խրատելով

բոլոր յոյսերուն և փափաքներուն! Շատ աշխատե-  
ցաւ, շատ յոյնեցաւ, բայց ի՞նչ օգուտ: Գիշեր ցե-  
րեկ մտաւտանջութեան մէջ էր Երուսաղէմի վան-  
քին մի քանի հազար կանգուն հողին համար և  
գարկութեան անապին դատը տեղի ունեցաւ. բայց  
Յարութիւն Պատրիարք մոռցաւ թէ անդին Հա-  
յաստանի մէջ այդ հողին հաղորապատիւ վտան-  
գի մէջ են. հայոց հողերը դրաւտած են քրիւրե-  
րէ, թիւրքերէ, իրաւունքն հայոց լինելու բայց  
ոչ որ օր մը ուշադրութիւն կը դարձնէ:

Ազգային կենսական շահոց այս մոռացութիւնն  
է ասո որ Յարութիւն Պատրիարք մեզ սիրելի ը-  
րած չէ: Պիտի շարունակենք Յարութիւն Պատ-  
րիարքի և Նուրեան Էֆէնդիի յաջորդներն Հայաս-  
տանի բարեկարգութեան խնդիրն: Այս է մեզ  
համար կարեւոր խնդիրն:

Ազգային ոճի մէջ և հետեւեալները դառն պի-  
տի լինին, եթէ շարունակենք մեր արդի անտար-  
բերութիւնը Հայաստանի վիճակի մասին: Գլխա-  
ւոր կէտ մը կայ, որ ամեն խնդրոց նախապատիւ  
պէտք է լինի, այդ է ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ:

Իբր անհատ մը, որ առիթ ունի հրապարակել  
վրայ գրելու և պարտականութիւն մը հետեւեալ  
կը ծանրանայ վրաս, զլուստը մտածութիւններէս  
մին եղած է Հայաստանի հողային խնդիրն: Հե-  
տաւորում եմ մանրամասն տեղեկութիւններ ունե-  
նալ: Տխուր իրողութիւն մը կենդանի կը մնայ  
Հայաստանի հողն հայոց ձեռքին կերպի: Ամեն-  
ուրեք քրիւրն ու թիւրքը կը ԳՐԱՆԵՆ հայոց հո-  
ղերը: Եթէ վիճակագրութիւն մը լինի, պիտի տես-  
նուի թէ ինչպէս մէկ քաւորդ դարու մէջ ան-  
դին քանակութեամբ հայոց հողեր անցած են  
քրիւրաց ու թրքաց. հայերն այդ հողերը չեն վա-  
ճաւած, այլ քրիւրն ու թիւրքը դրաւտած են դայիս  
չնորհի իրենց ազդեցութիւնը: Ինչո՞ք հայ գիւղա-  
ցին գատ կը բանայ. բայց ոչ ստակ ունի, ոչ լե-  
զուն, ոչ պաշտպան, մինչ իւր հակառակորդ քրիւր  
պէն դրամ ալ ունի, լիզու ալ ունի, պաշտպան

կարելի է ոչնչացնել այդ նախապաշարմունքնե-  
րը. միթէ կարելի է համոզել գեղջուկին, որ երբ  
քո սիրելին հիւանդանում է՝ մի դիմիր ինքնակու-  
տդէտ հէքիներին, յոյսդ մի դնիր միմիայն սուր-  
բերի և դուշակութիւնների վրա: Գիւղացին մի-  
ջոց չունի բռնի օգնութեան դիմելու. բռնի չը  
կայ. նրան անմեղմանալի է ուսեալ բռնի լը: Ի  
հարկէ գիւղը դեռ կը շարունակի սուրբերի և ինք-  
նակու հէքիներին դուշակութիւններով ապրել,  
քանի որ ուրիշ միջոց չունի:

Ամենքն էլ ցաւում են, որ գիւղացի կինը շատ  
անգամ իր ամբողջ կեանքը տալիս է տղէտ  
տատմաների ձեռքը, որոնք իրանց ազդեցութեան  
զոհ են դարձնում բազմաթիւ թշուառներին: Ա-  
մենքն էլ գոչում են, որ հոգեարականութիւնը  
մեծ բան կարող է լինել, և նա պէտք է կրթված  
լինի, որպէս զի կարողանայ ազդել ժողովրդի  
մտքի և սրտի վրա, և այն և այլն: Բայց միթէ  
ցաւելով և ցանկանալով գործեր կարող են չին-  
վել աշխարհի երեսին թողնելը գիւղերը. նոյն  
իսկ դաւառական փոքրիկ քաղաքները և գիւղա-  
քաղաքները ունեն արեւօք իրանց համար այնպի-  
սի անհրաժեշտ օգնականներ, ինչպիսին բռնի  
է: Մի բռնի, միմիայն մի բռնի իր գործունէու-  
թեամբ աւելի շուտ կարող է արմատախիւ անել  
մի շարք մահաբեր նախապաշարմունքներ, քան  
թէ հաղարտուր խրատները, որոնք ամեն օր ա-  
մեն կողմից լսվում են: Թող ցրվեն մեր ժողովր-  
դի մէջ, գէթ քիչ-քիչ, բռնիներ, մանկաբարձու-  
հիւներ, և այն ժամանակ ժողովուրդը ինքը իր  
կամքով երեսը շուտ կը տայ իր դարձող նախա-  
պաշարմունքներին: Թող հայ գիւղական պարժապետ  
և քահանայ իրանց մանկավարժական հմուտ-  
թիւնների հետ միասին տանեն դէպի գիւղը մի  
փոքր էլ բռնական դիմութիւն, մի փոքր էլ  
գործնական տեղեկութիւններ,—և այն ժամանակ  
գիւղը ինքնակամ կերպով կը հետեի մեր ցանկա-  
ցած ընթացքին: Բայց միթէ այդ նպատակին կա-  
րելի է համոզել, քանի որ դրա մասին ոչ ոք չէ

ալ ունի: Եւ եթէ օր մը ուրիշ պատահարներ ալ  
տեղի ունենան, ամեն ինչ վերջացած պիտի լինի  
մեզ համար:

Հայաստանի հողային խնդիրը մեզ համար աղ-  
գային օրուան ամենէն մեծ խնդիրը պէտք է լի-  
նի: Եւ այդ խնդիրը լուծելու համար հարկ չը  
կայ ոչ Եւրօպայի դիմել, ոչ քաղաքական հարց  
յարուցանել: Հայ գիւղացին իրաւունքներն այն-  
քան ակնհայտ են—ոչ ուրեք տեղական իշխանու-  
թիւնը յայտարարած են թէ՛ հայք իրաւունք չու-  
նին,—որ բաւական է թէ Պատրիարքարանը խըն-  
դիրն իւր ձեռքն առնու. մի քանի փաստաբանք,  
պատրիարքարանի աջակցութիւնը կը բաւեն որ  
իրաւունքն յարգուի և հայ գիւղացիք իրենց հո-  
ղերու տէր լինին: Օրոշման հրատարակները պի-  
տի յարգեն իրաւունքն և վտանգ լինելու ենք, որ  
կայսրն իսկ պիտի հրամայէ արդարութեան գոր-  
ծադրութիւնը: Եւ եթէ օր մը յուզուին այս խըն-  
դիրները, այն ատեն պիտի տեսնենք թէ ինչ  
ուպառնալիք կայ մեր գոյութեան մասին իսկ-  
կրնանք ապրել առանց հողի:

Բայց թէ ինչո՞ւ չեն յուզուի այս խնդիրներն  
պատճառները բազմաթիւ են, ի միջի այլոց Պօ-  
լոյ դանազան գործիչներու միաբանութիւնը քրիւր  
պէյերու հետ: Մի քանի տարի առաջ մանրամասն  
տեղեկութիւններ ունեցայ Խաղբաղի հողային  
խնդրոյ մը մասին: Քրիւր պէյ մը գրաւած հայոց  
հողերը Պօլսոյ հայ փաստաբանի մը ձեռքը կը  
յաջողցնէ իւր գործը, բայց ոչ թէ օրինաւոր  
կերպով, այլ այդ հայ փաստաբանին չնորհի կա-  
շառք կուտէին անոնք, որոց յանձնուած էր գիւ-  
ղացոց պաշտպանութիւնը: Խեղճ գիւղացիք զոհ  
եղան: Ո՞րքան այսպիսի դէպքեր:

Երբ այսպիսի խնդիրներ կը գրաւեն մեր մտա-  
ծութիւնը, ի հարկէ, դուռնաօք կը նայեմք այն  
սխմար խնդիրներու վրայ, ոչք անդադար կը  
սպառեն մեր ժամանակը: Ներքին կանոնադրի,  
դատադրք, վկայական և այլն և այլն: Իմ մասին,

հոգում: ինչպես կարող են երևան դալ լաւ և պիտանի քանակութեամբ, քանի որ քանակայ լինելու համար ոչինչ չեն պահանջում: Ինչպէս մինք կարող ենք ունենալ լաւ դպրոցներ, քանի որ լաւ վարժարաններ ոչ ոք չէ պատրաստում: Որտեղից կարող է դաւաճական մի անկիւնում լինել բըժիշկի, մի մանկաբարձուհի, մի նոր, հասկացող, ուղղութիւն տուող մարդ, քանի որ կրթութեանը ամենքն էլ կենտրոնանում են միմիայն աղմկալից քաղաքներում: Ամեն կողմից դանդաղանք են լրւում, բայց ոչ ոք չէ մտածում դրանց առաջն առնելու մասին: Ոչ մի հասարակութիւն յանձն չէ առնում իր ուսումնարաններին մի օրիորդ, մի երիտասարդ ուղարկել իր հաշւով և բարձր ուսում տալ, պատրաստել բժիշկ, վարժուհի, մանկաբարձուհի, կամ մի մասնագէտ անտես իր մօտ պահելու համար: Համաձայնեցէք, որ մի լաւ մանկաբարձուհին աւելի շատ կարող է արմատախիլ անել մի գաւառական քաղաքի իրական տեղի աշխարհիկ սովորութիւնները, և աւելի շատ կարող է կնոջ ինքնութիւնը, անկախ սպիւնու դադափարը ներշնչել, քան թէ հազարաւոր խրատները և քարոզները:

Ժողովրդի վատ և սխալ հակումները նրա մէջ մարմնացել են, և այն մարմնացած հակումների դէմ պէտք է տեղի ու տեղը կուեն, պէտք է դործով մարտնչել, դրանց պէտք է դիմադրել կենդանի մարդկերանցով և կենդանի գործով: Բայց տարբերակաբար, ներկայումս այդ կենդանի մարդոց փոխարէն, հրապարակի վրա մեռած և շատ հնացած խօսքեր միայն կան... և ուրիշ ոչինչ:

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՄ-ԱՌՈՒԽՈՒՄՅՈՒՅ

20-ին յուլիսի

Դիմորերիտ հիւանդութիւնը ահա մի քանի տարի է ինչ բուն է դրել Ազգայնութիւն և չէ հեռանում այստեղից: Այս տարի ես նա երեւոյ, բայց բարեբաղդաբար բաւականացաւ մի քանի դոհեր տանելով: այժմ նա համարեա թէ չը կայ, եթէ մէկ մէկ պատահում է, այն էլ առանց ծանր հետեւանքի է անցնում: Այսպիսի դէպքերում հիւանդութեան առաջն առնելու համար, տեղացիները սովորաբար դիմում են օրին օգնութեան, զոհեր են առնում և բերել են տալիս հաշակաւոր տուրք: Կարապետի վաճառքը Հազարապետի կողմէ մասնաւոր, որին յետոյ պատեցնում են և հարեան գիւղերը, եթէ միայն այնտեղ ևս հիւանդութիւն

իւր երեսփոխան, չէմ գիտեր ում տալ իմ բուէն Գաղ. Ժողովը անդամ ընտրելու համար: Չեմ տեսներ մէկը, որ իրեն մտածութեանց աւարկայ ըրած լինի Հայաստանի խնդիրներն և ընտրելի լինի Գաղ. Ժողովը: Իսկ պատրիարքութեան համար ընտրելի պէտք է լինի այն անձն, որ հզօրապէս պիտի պաշտպան հանդիսանայ Հայաստանի հողային խնդրոյն: Այս պայմանի ընտրելի մը: Թեւեալ, բայց դէմ ես չեմ տեսներ, բայց Հայրիկին:

Հայրիկ պէտք էր Տիգրանակերտ երթալ, սակայն տակաւին կառավարութեան կողմէն հրաման չեղաւ: Խնդիրը ներկայացած է նախարարաց խորհրդին, որոշումը կը յաղաղէ: Այն Զարու-թիւն Պատրիարք կարենայ այդ հրամանն առնել կառավարութիւնէն, իրապէս աղղին ծառայութիւն մը մատուցած պիտի լինի:

Իսկ Տիգրանակերտ գտնուող Արիտակէս կալուկապոս Գերձակեան կը վաղէ Պօլիս կուգայ, ան-ինամ թողնել իւր հօտն: Մուշի վանահայր ընտրուած էր այդ կալուկապոսն և անդ կը գտնուէր, երբ հրաման ստացաւ Պօլսէն երթալ Տիգրանակերտ և կարգադրել գործերն: Եւ մինչ ինք կը գտնուէր ի Տիգրանակերտ Պատրիարքը հրաման խրկեց Տրապիզոնի առաջնորդ Գարեգին կալուկապոս Սրուանձախանցի երթալ Մուշ: Գարեգին կալուկապոս կարող մարդ մ'է և շատ մը գործեր տեսնելու յարմար: Նա կերթայ Մուշ և կը ստանձնէ առաջնորդութեան ու վանահայրութեան պաշտօնները, ի գոհունակութիւն ժողովրդեան: Այն ինչ այս չարաշնորհ ըրել կամուռ: Արիտակէս կալուկապոս կը մտնայ Տիգրանակերտն ալ, ժողովուրդն ալ, կրօնափոխութեան ալ հողային խնդիրն ալ: Խնդիրն իրեն համար հայել խնդիր է— և ձխաթափ կը վազէ, կը հանի Մուշ: Կուգէ վանական Գարեգին կալուկապոսը, բայց նորա ոտքն հաստատ է: Զայրացած մեր Արիտակէս կալուկապոսը կը վա-

է լինում: Այսպիսի հանդամները երբեք մի պայման աչքից բաց են թողնում, առանց որի յըժար է հիւանդութիւնները արմատախիլ անել, այն է՝ խտիւ հակել դիւղի առողջապահական դրութեան վրա, հակել երկխոսցող վրա և դիմել բժիշկների օգնութեան: Տարբերակաբար այդ ամենագլխաւոր և համարեա միակ միջոցը անուշադրութեան է արժու, և դիւղը այժմ մարդու լինելուց շատ հեռու է: Այդ անմարբութիւնը նկատուում է թէ անպիւն կեանքի մէջ և թէ փողոցներում:

Հիւանդութեան ժամանակ բժշկին դիմում են այն ժամանակ միայն, երբ հիւանդը անել դրութեան մէջ է լինում: Բայց ո՞վ պէտք է բացատրէ կանոնաւոր սպիւնու եղանակները... Դիւղի հաւկացող, ինտելիգենտ կոչված դասակարգը, բայց միթէ նա ժամանակ կամ ոչ ոք տեսնի դրա համար, քանակները, բայց միթէ նրանք խօսել գիտեն, վանահայր կալուկապոսը, բայց միթէ նրան լսող կայ և կարենալ է արդեօք լսել, գուցէ ասէք բժիշկները, բայց միթէ նրանք կարող են մի բան անել առանց անպիւն վարձի, նրանք բացի դրանց անմատչելի են ժողովրդին իրանց նշանակած վարձով: 4—5 բուրլի վիճակի համար քաղաքներում հաղի են առնում, բայց այստեղ վերցնում են նոյնքան և անխտիր թէ փորձված բժիշկը և թէ անփորձը: Այդ բանում յետ չէ մտում և տեղիս դեղատնաւոր, որը, ինչպէս ասում են, 5 կօպէկի բանը ծախում է 40—50 կօպէկով: միթէ սրա վրա ուշադրութիւն չը պէտք է դարձնել:

Խօսելով բժիշկների մասին, չեմ կարող այստեղ չը յիշել և մանկաբարձուհու մասին, որի պակասութիւնը վաղուց էր նկատուում: Այժմ դրա առաջը մասամբ աւելած կարելի է համարել չը նորհիւ տ. Թագուհի Արաքսեանցին, որը մի քանի տարի առաջ իր սեփական միջոցներով այստեղի որը օրիորդներին մէկին ուղարկել էր Թիֆլիսի մանկաբարձական ուսումնարանը այն պայմանով, որ աւարտելուց յետոյ վերադառնալ հայրենիք: Աւարտելով իր ուսումը այդ օրիորդը վերադարձել է այստեղ, և պարագում է իր մասնագիտութեան մը: Յոյս ունենք որ այդպիսի օրինակներ շատ կը լինեն, և այդպիսով դաւաններում էլ կը դառնան կանայք, որոնք կարող կը լինեն անկախ կերպով, սեփական աշխատանքով ապրել:

Բժիշկ ունենալու ցանկութիւնը օրըստօրէ հաստատուում է հասարակութեան մէջ և երկի շուտով կը համին իր վախճանին: Յանկալի է օր

դէ Պօլիս, ուր պիտի հասնի քիչ օրէն: Ահա քաջ հովիւ մը, որ իւր տեսակին մէջ մինակ չէ: Պօլիս է այժմ Օրմանեան կալուկապոսը, որ պիտի ուղարկէ ու խնամէ: Ի՞նչ միջոցով հրամանաւ և Զարութիւն Պատրիարքի հաճութեամբն է որ Օրմանեան կալուկապոս կը թողու: Կարեն և կերթայ Եւթիմիան: Շնորհով և կեղեցականութեամբ շուտաւարձութիւնը դրալի կընէ Օրմանեան կալուկապոսի բացակայութիւնը: Իսկապէս պէտք էր աստ մնար:

Պօլիս կեաւ նաև Վինտակոյ Միխայիլեանց Արաքսայրը, Կարենեան արքեպիսկոպոսը, որ մի քանի ամիս պիտի անցնէ այս կողմերը, ինչպէս նաև ի Խրիմ, հաւանօրէն: Իգնատիոս կալուկապոս լաւ մարդ է—գործունեայ, պարզասէր, մեծ հող կը տանի վանքին դարձալին: Գլխաւորապէս իրեն պարտական ենք Սիւտանի դեղեցիկ տպարարութիւնը: Միխայիլեանց Արքային մեր մէջ ներկայութիւնը շատ անուակեանքով օգտակար պիտի կարենայ լինել: Արքապետը պիտի կարենայ աղղային կարծեաց անդեակ լինել, մեր վիճակին վրայ ծանօթութիւններ ունենալ և ըստ այնմ ներդաշնակութիւն մը հաստատել վանքին և աղղին միջև հրատարակութեանց համար:

Աղարեան Պատրիարք շատ ցուրտ վարուեցաւ Միխայիլեանց Արքային հետ: Արք. Աղարեան Պատրիարք այս տարի Վինտակոյ գնաց Միխայիլեանց ամենախառաւոր ընդունակութիւն ըրին նմա, իսկ նա և ոչ իսկ ընդ առաջ վարդապետ մը խրկեց:

Աղարեան Պատրիարք կարծես մասնաւոր դիտում մը ունի հարուածել կամ անտես առնել ամեն ինչ որ աղղային կերպարանք մը, որոն մը ունի ինքն և իւր կողմը հակադրային ուղի մը կը անուշանան, աղղութիւնը դոհելով կը կարծեն կը լսեն:

Այս օրերս Ամասիայի դէպք մը վերապիւն դըժ-

առաջ կաղմել հասարակական ժողով և մնալ այդ կարեւոր հարցը, քանի որ մի քանի բժիշկներ էլ այստեղ են և դրանցից մէկը ցանկանում է մնալ: Կը դալ սեպտեմբեր, դրանք բոլորը կը հեռանան, այն ժամանակ արդէն ուշ կը լինի:

Մի քանի խօսք էլ այստեղի ուսումնարանական խնդրի սովորական դարձած ցուերի մասին: Այս բօլէին հասարակութեան և հոգաբարձութեան յարաբերութիւնները շատ լարված են, և այդ էլ ուսուցիչների բռնիքների և ուսուցիչներին փոփոխելու պատճառով: Թէ մը կողմն է արդար, և մըն է մեղաւոր, այդ երկուսը կը լինի քննել: Մի բան միայն անհերքելի է, այդ այն է, որ այստեղ միշտ հասարակական ամեն տեսակ գործեր փչացնողները, աղղայինների պատճառ դարձողները լինում են այստեղի «աղղները», որոնք իրանց անձնական կապերիցները և խնամութեան շահերը պաշտպանելու համար, անհերքելի գործեր են կատարում: Որ Աղղութիւն հասարակութիւնը ընդհանրապէս չան է խօսում դպրոցի, վարժարանների, վարժուհիների մասին,—առանց շատ անգամ հառկանալ իր խօսքածի նպատակը և արժէքը,—այդ մի փաստ է: Բայց որ հասարակութեան զբըժովում պատճառ են դառնում դանապան «աղղները»: Իրանց խնամութիւնների ինտրիգաներով, այդ էլ անհերքելի և դառն ճշմարտութիւն է: Օրինակի համար, հոգաբարձուներից մէկը իր համար նպատակ է չինել հեռացնել դպրոցից ամեն մի ինքնուրոյն և պատիւ ճանաչող ուսուցչի, այդ դեռ բաւական չէ, նոյն աղա-հոգաբարձուն լցնում է դպրոցը իր աղղականներով, իր խնամքներով, իր արքանեակ տղաներով, և այդ երեւոյթը կրկնվում է տարիներով: Իսկ Աղղութիւն հասարակութիւնը այդ տեսակով լրում է, կամ մի քիչ խօսելով թողնում հեռանում է: Այդ պատիւ չէ բերում հասարակութեանը: Փոխանակ խօսելով բաւականանալու, փոխանակ միայն ուսուցիչների բանքանալու, նոյն հասարակութիւնը շատ լաւ կանէ եթէ հեռացնել դպրոցից այդպիսի մեծապարտ անձնակներին, որոնք իսկապէս ոչինչ չեն չինում, այլ թող փչելով խառնակութիւններ են առաջ բերում: Ժամանակ է, որ աղղեցիք մի վաղը աւելի լրջօրէն և դիտակցաբար վարվել իրանց հասարակական բոլոր գործերում:

Զ. Օ. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 5-ին, ինչպէս յայտնի է, սաստիկ անձրև էր եկել Թիֆլիսում և շրջակայքում: Փողոցները դարձել էին կատարեալ գետեր: Թուրքի մայրաքաղաքի վրա գտնվող բաղնիքները անձրևի ժամանակ յանկարծ ջրով լցվեցան և այդ բաղնիքներում լողացողները դուրս փախան կատարեալապէս մերկ: Խալաթովի քարվասարայի ստորին յարկը ջրով լցվեցաւ և ասում են մի քանի հարկուհիներ րուրու ալ և ալ ապրանքներ փչացրեց: Գլխաւորապէս փչացաւ շաքար: Խալաթովի քարվասարայի ետև գտնված դ ա բ ա խ ա ն ա ն, որտեղ մի քանի կանայք լուացք էին լուանում, յանկարծ ջուրը այն աստիճան շատացաւ, որ կանանցից երեքին ջրի հոսանքը տարաւ: Կարծում են որ նըրանց դեղները կը գտնվեն Կուր գետում: Թիֆլիսում այդ անձրևը մեծ վնասներ տուեց շատ տներին և փողոցներին:

ԿՅՁՕՐԻՑ մեզ դրում են, որ օգոստոսի 5-ին սարսափելի սեւեւ է տեղի ունեցել ալդտեղ: Սարսափելի անձրևի հետ զարկ էր և շատ սուսա կարկուտ: Զանապարհները շատ տեղ փչացան: Անձրևը շարունակվում էր և օգոստոսի 5-ի դիւղերը և օգոստոսի 6-ին դադարեց միայն կէսօրից յետոյ: Անուհետև եղանակը պարզվեցաւ:

Օգոստոսի 7-ին նկատելի եղաւ Թիֆլիսում արեգակի մասնական խաւարում: Արեգակի երեսի կէսը միայն ծածկվեցաւ լուսնի ստուերով: Խաւարումը սկսվեցաւ 6 ժամին և մինչև 7 1/2 ժամը աւելանում էր, իսկ այդ ժամանակից սկսեց պակասել: Բայց փողոցներում հասարակ ժողովուրդը, խնամութեանը և այլն հետաքրքրութեամբ նայում էին արեգակի վրա սեւացած ապակիների միջոցով: Զարմանալի տեսարան էին ներկայացնում փողոցները:

Մենք լսում ենք, որ Թիֆլիսի հայոց առաջնորդ Արիտակէս կալուկապոս Սեդրակեան կանչված է Եւթիմիան:

Մեզ հեռագրում են Բաթումից, օգոստոսի 5-ից: «Մեր յայտնի բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանը ուղևորվեցաւ դէպի Կ. Պօլիս»:

Ինչպէս լսել է վրաց «Լիբերալ» լրագիրը, փոթիլ քաղաքագլուխը ինդիք է ներկայացրել ուսում-

րունակուէր եթէ աղղայ մայրն՝ որ վրա հասած էր՝ խնդրած չը լինէր կառավարչէն որ դադարեցունէ դայն: Այդ կնոջ կրկնակի թախանձանայ վրայ, Ֆիլիսով պէ ձի մը կը հեծնայ և կառավարական պաշտօնատունը կրկնէ: Անդ կուէ կուտայ հայ հասարակութեան բոլոր աղղեցիկ անդամներն և ժողով մը կը գումարէ յորում կը յանձնարարուի երկու երեւեաց՝ աղղայն քով երթալով անոր միջոց իմանալ: Ատեղմէ մին՝ Զաւոր Եֆէնդի Սիմեան, կարող և համարակեր լեզուի տէր երիտասարդ մը, յաջողեցաւ համոզել օրիորդն իւր ծնողաց քով մնալ և կրօնափոխ չը լինել: Բնականաբար կառավարչէն համակերպեցաւ և աղղային յանձնեց իւր ընտանեաց: Երբ հայ երեւելի կառավարական պաշտօնատունէն մեկնեցան, ամբողջ սկսաւ հետեւիլ անոնց, անխնայ խօսքեր արձակելով կառավարչին դէմ, որ պատճառ եղած էր որ աստիճանի չափ հայեր վիրաւորուած էին: Յայնժամ ի ժողով կը գումարեն և հեռագրեր կուղղեն Սեդրակեան Կառավարչին, Մեծ-Կաղարքոսին, և հայոց Պատրիարքանին, իրողութիւնը նոյնութեամբ պատմելով և արդարութիւն ու պաշտպանութիւն հայեցելով:

Ատեղմէ դատ, ուրիշ երկու հեռագրեր ուղղուած են, մին Մեծ-Կաղարքոսին և միւրը Սեդրակեան Կառավարչին, յայտնելով թէ կառավարչը բարկանալով հայ հասարակութեան դէմ որ առաջին անգամ ինք հեռագրեր ուղղած էր, կը ջառնայ ամեն կերպ տառապանաց մատնել դայն, և ինդրելով որ յատուկ ընտրել մը դրուի և այլն: Միւս կողմէ գերմանական դեր-հիւպատոս տեղեկագիր մը ուղղած է իւր դիւանատան:

Իսկ հայ-հռոմէական վարդապետը կը բաժնուի բերտոնիկէ համերաշխութենէն, ընդհանուրին վնասով մասնաւոր շահեր պաշտպանել օգտակար համարելով: Այդպիսի ընթացք մ'է որ միշտ զրգոհութեան առիթ ընծայելով հակակրօնութիւն յառաջ կը բերէ ընդդէմ հայ-հռոմէական կղերի, որ ինքն ալ հաւանօրէն բաղձացող է այդ հակակրօնութեան, բայց մեք պէտք է դառնալ հայ-հռոմէական կղերը հայ-հռոմէական աղղէն, կղերի մը դիմադրութիւնը պատճառ մը չէ բնդհանուր աւտելութիւն առաջ բերելու:

Հայկակ

նարանական վարչութիւններ այդ քաղաքում մի առևտրական դպրոց բանալու համար:

Պետերբուրգում աշխարհ դուստրուի է պիտի գործեն ժողով, որը պէտք է քննի, ինչպէս լսել են Պետերբուրգի լրագիրները, այն միջոցները, որոնցով կարելի է վարձարանները առևտրային գիտնոր- ծութիւնը:

Ամսիկ 5-ին, թիֆլիսի Հաւաքար թաղում, կէ- սորվայ ժամը 1-ին մի 19 տարեկան երիտասարդ վախճարի մի 16 տարեկան հայ աղջիկի փախու- տական սիրահարներին նայն օրը դատն:

«Новое Время» լրագրի մէջ կարդում ենք հե- տեւեալը. «Ս. Սինդը կարգադրեց հետեւեալը. 1) թող չը տա որ սեմինարիաների աշակերտական գրադարաններում կարգադրվեն ամսագիրներ և լը- տակները. 2) առանց ուսուցիչների գրաւոր թոյլ- տուութեան այդ գրադարանները աշակերտներին դրեք չը տա և 3) նոյն իսկ ուսուցիչներին այդ թոյլտուութիւնը ենթարկել սեմինարիայի վերա- տեսչի կոնտրոլին:

Մի քանի անձինք ձեռնարկել են հրատարակե- լու մի շարք գրքեր, որոնց նպատակն է հետա- քրքրվողներին ծանօթացնել կովկասի հետ: Արդէն լայն են տեսել երկու գրքերի. գրքերից մի- վերջինը է «Кавказъ» Справочная книга, со- ставленная Старожиломъ. Առաջին գրքիցում մի ընդհանուր ակնարկ է ձգւում կովկասի բնու- թեան և ազգաբնակչութեան վրա, ապա արդեւ- նարական կարգով առաջ են բերված կովկասի փոքր ի շատե աչքի ընկնող քաղաքները և դիւ- դիւր և ցոյց է տրված թէ ինչպիսի են նրանք նա- տուր, ինչքան ընակիչ ունեն, ինչ աղբիւր են և աչքն: Երկրորդ գրքիցում խօսվում է կովկասի հաղորդակցութեան ծանապարհների մասին: Այդ մասի տեղեկութիւնները մի փոքր անհաստատա- շար են, մինչդեռ երկրորդիցները և ջրային ծա- նապարհների մասին շատ երկար են խօսում հե- ղինակները: Չը նայելով այդ և մի քանի ուրիշ աննշան թերութիւններին, այդ գրքերիցները կարող են օգտակար լինել կովկաս եկող օտարներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, յուլիսի 22-ին

Ստոյգ է որ Թաւրիզում բնակվում են մոտա- ւորապէս 500 հայ գերդաստաններ, բայց սրանց մեծամասնութիւնը կազմում են արհեստաւորներ, որոնք պատկանում են, ի հարկէ, ստորին դասա- կարգին: Իսկ ստորին դասակարգի մարդիկ ձայն չունեն այստեղ ոչ մի ժողովի և ոչ մի ազգային դպրոցի մէջ: Ազգային բոլոր գործերը գտնվում են վիճակաւոր առաջնորդի և իր արքանականների ձեռքում: Ո՛րքեր են սրանք. դրանք ազան և րն են, որոնք միմիայն իրաւունք ունեն իրանց քմաց համաձայն վարվելու, չը նայած որ տեղացիք էլ չեն, այլ մեծ մասամբ Ղարաբաղի անտառներից դաղված: Աղաները ամեն ճանապարհներով հա- րատացած մարդիկ լինելով, մեծ ճնշում են գործ դնում ստորին դասակարգի ժողովրդի վրա, և մեծ աղեկներով ունեն նրա վրա:

Թաւրիզում աղան ամենակարող է. նա կա- րող է ամեն կերպով վնասել այն մարդուն, որ անդրոյշ է խօսում և իրան չէ հնազանդվում ան- պայման կերպով: Աղան այսօր փառաւոր չէնք է ընծայում ազգային կրթութեան գործին, իսկ վա- ղը, չնորձով իր հարստութեան, կարողանում է նշանելու իր դուստրը մօրաբոյժ որդու հետ... Աղայի համար ամեն բան կարելի է, ուրեմն նրա համար չհաս սղավներն էլ դոյզութիւն գտնեն:

Սճա պատկառով աղա—հողաբարձուք գիշեր ցե- րեկ մտածում են ազգի բարին և յոյս կայ որ իրանց մօտիկ ազգականութեան շնորհով Թաւրի- ղի 500 գերդաստանը շուտով 2000-ի կը հասց- նեն...

Մեր աղաները վերջին ժամանակները հատկա- ցել են և ամառիկ ու ձմեռիկ շնչանակութիւնը և սկսեցին օգտվել լրագիրներից, զանազան «Այա- նատներ»-ից կեղծ անուաններով տակ յօդուածներ հրատարակելով հայոց լրագիրներում, որտեղ ի- րանք երևան են հանում իրանց սեփական քաջա- գործութիւնները...

Մեր քաղաքի Արամեան դպրոցի հողաբարձու-

ները իրանց ուսումը ստացել են, երբ դեռ ևս գոյութիւն չունէր Արամեան դպրոցը և համարեա թէ դիտեն այնքան, որքան որ գիտէ մի պատ- րաստական դասատան աշակերտ: Այժմ թող ըն- թերցող ինքն երևակայէ թէ ուսուցիչների և առարկաների ինչ ընտրութիւն կարող են անել այս տեսակ հողաբարձուներ: Մի ուսուցիչ առա- ջարկում է հողաբարձութեանը մտցնել դպրոցի առարկաների մէջ «մարդակազմութեան» դասը (անատոմիա), բայց այդ առաջարկութիւնը մերժ- վում է և ուսուցիչը պատասխան է ստանում թէ Արամեան դպրոցը բժշկական դպրոց չէ: Արա- մեան դպրոցի համար վարձվել է ուստաց լեզուի մի ուսուցիչ, որ հայերէն ամենին չը գիտէ, այնպէս որ պարսկաստանցի երեխաները նրան ամենին չեն հասկանում, քանի որ ուսուցիչը ուսուսեին իր տուած բացատրութիւնները ամե- նին չէ կարող հայերէն լեզուով հասկացնել: Ուսուցիչը գտնէ պէտք է իմանայ հայերէն բացատ- րել իր ասածները: Եւ այդ ուսուցիչը ստանում է տարեկան 800 ռուբլի ուժիկ: Այդպիսով աննպա- տակ կորչում են կապիւններով հաւաքած ազգա- յին փողերը և աշակերտներն էլ չեն կարողանում օրինաւոր կերպով ուսուսեին լեզուն սովորել, որ իրանց համար անհրաժեշտ է, քանի որ ապրում են Ռուսաստանի սահմանափակ երկրում և հա- տակ առնելով ստիպված կը լինեն զուգէ առև- տրական յարաբերութիւններ էլ ունենալ Ռու- սաստանի հետ:

Հասկանալի է որ տղան մի մարդ, որ անտառ- ներում է մեծացած, չէ կարող օրինաւոր կերպով կատարել դպրոցի հողաբարձուի ծանր և պա- տասխանատու պաշտօնը: Միթէ երբ որ մարդը հարուստ է, այն էլ հարուստացել է ամեն տեսակ միջոցներով, նա դրանով և ինչոք և ուսում ա- ուած է դառնում...

Գտնէ մեր հողաբարձուները հասկանալին ի- րանց անընդունակութիւնը և դպրոցի հողաբար- ձու լինելու իրանց անպատրաստ լինելը և հա- մատարակութեամբ ու քաղաքակրթութեամբ հրաժար- վին էլ այդ դժուար պաշտօնից:

Մուրադ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կիւիկիայի հայոց կաթողիկոսը յուլիսի 30-ից հեռագրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, որ Զէյթունի մէջ մեծ հրդեհ է պատահել, որին զոհ դնաց ամբողջ գիւղաքաղաքը: Ինչպէս հա- զորդում են Պոլսի հայոց լրագիրները, Պատրիար- քը հեռագրով աւելի մանրամասն տեղեկութիւն- ներ է խնդրել թէ աղետի մասին, և թէ այն մա- սին, թէ տեղական կառավարութիւնը և կաթո- ղիկոսը ինչ միջոցներ են ձեռք առել թշուառ- հրկիւղեալներին օգնելու համար:

—«Արեւիք» լրագրում կարդում ենք. «Ամա- սիայից եկած տեղեկութեանց նայելով հայ աղջի- կը ոչ թէ ինքնաջօծար կերպով է հեռացել իր տունից, ինչպէս Թաւրիզի և Սասնէի ուղղակի հան- ըրողը պատմել էր, այլ մէկ քանի թուրքերի կողմից բռնութեամբ առեւանգուելը հաստատուել է աղջկան մայն ազատ յայտարարութեան վրա թէ ինքն որ և է թուրքի հետ սիրահարված չէ և թէ ընաւ կրօնափոխութեան դիմելու համարում չէ ունեցել: Աղջիկը այժմ յանձնված է իր ծնողներին: Նոյնպէս հանրագրի այն մասը թէ Ամասիայի կրօնական և քաղաքական ժողովները ճնշման ենթե- լին ստորագրել Բ. Գրան և Պատրիարքարանին ուղղած բողոքներին հեռագիրները ընդդէմ կառա- վարչին, բողոքովին անհիմն է, որովհետեւ Ամա- սիայի կրօնական և քաղաքական ժողովներն պար- տականութիւնից ստորագրած են այդ հեռագիրը: Ամասիայի իտալէի ժողովի ոչ-մասնաւորական ան- դամները, ինչպէս նաև յոնաց մետրապօլիտի փա- խանորդը և բողոքականների ազգապետը այս խնդիրը ջերմապէս պաշտպանել են ի նպաստ հայոց, միայն տեղւոյն հայ-հուսթիանայ առաջ- նորդական տեղապահ, յայտնի չէ ինչ պատճա- րով իր քրիստոնէայ պաշտօնակիցներից տարբեր ընթացքի է հետևել:

—Վիեննայից հեռագրում են, որ իշխան Ալեք- սանդրը իր կողմից միշտ աշխատում էր համոզել Կորուրդի պրինցին որքան կարելի է չուտով Բոլ- ղարիս գնալ: Հաջորդելով այդ դէպքը, լրագիր- ները այն միտքն են յայտնում, որ Կորուրդի պը- ընցը մեծ պաշտպանութիւն և համակրութիւն կը դնեն Բոլգարիայում Ալեքսանդր իշխանի կողմ- նակիցներից:

—Սալոնքի ցանկութիւն է յայտնել միջամտել

Խառնիայի և Արմաւիրիայի գործերում՝ հաշու- թիւն զցելու համար: Խառնիայի մասովը թշնա- մարար է վերաբերվում դէպի անգլիական կառա- վարութեան այդ ձգտումները:

—Իտալիայի միսիոնարութիւնը աշխատում է որ- քան կարելի է չուտով փոփոխութեան ենթարկել Մերիայի սահմանադրութիւնը: Արդէն կազմված է մի յանձնաժողով՝ դանադան քաղաքական կու- սակցութիւնների ներկայացուցիչներից, որոնց յան- ձնված է կազմել այդ փոփոխութեան նախագիծը: Առաջադէմ կուսակցութիւնը ահապէն փոփոխու- թիւններ է պահանջում ամենազլուստոր հարցերից մէկն էլ այն է, թէ պէտք է արդեօք հիմնել սե- նատ թէ ոչ:

—Հուտով Բուխարայում կըսկսվին ընդհանուր ընտրութիւններ: Բոլոր կուսակցութիւններն էլ ուշուում են կառավարութեան զեղել իրանց ձեռքը առնել, բայց ի նկատի ունենալով, որ այդ կու- սակցութիւններից և ոչ մէկը չունի մեծամաս- նութիւն և մշակված մի ծրագիր, կարելի է կար- ծել, որ այժման միսիոնարութիւնը յաղթող կը հանդիսանայ:

—Ինչպէս գրում են Պոլսից, Թիւրքաց կառա- վարութիւնը ցանկանում է, որ անպատճառ դեսպա- նաժողով գումարվի կնճառու կերպարանը ընդու- նող բողոքական հարցը վճռելու համար: Բայց, ինչպէս երևում է, պետութիւններից մի քանիսը ընդդէմ են այդ մտադրութեանը:

—«Revue de l'Orient» լրագիրը տեղեկացել է, որ Մակեդոնիայում վերջին ժամանակները կա- տարեալ անդխտանութիւն է տիրապետում, որով- հետե տեղական թիւրք իշխանութիւնը ոչինչ աղեկցութիւն համարեա չունի խակալէս երկրի մէջ մեծ աղեկցութիւն են ձեռք բերել յոյն և բողոքացի պաշտօնեաները, որոնք մի և նոյն յայտ- նի նպատակով ջերմ պրօպագանդա են անում աղգաբնակչութեան մէջ: Առաջակութիւնը շատ ա- ճել է երկրի մէջ, և իշխանութիւնը իրան անդոր է դրում նրանց արշաւանքների առաջն առնելու համար:

—Կրկին լուրեր են տարածվել, որ պարսից Նասր-էլդին շահը շուտով մի ճանապարհորդու- թիւն է սկսելու դէպի Եւրոպա: Եւրոպական մի քանի լրագիրներին ստացած տեղեկութիւններին նայելով, Շահը Թէհրանից կը դնայ Պետերբուրգ, որտեղ մի քանի ժամանակ մնալուց յետոյ կուղի- ւորվի Լոնդոն: Շահը կը լինի և Եւրոպական ու- ըրչ մայրաքաղաքներում, բայց նա երկար կը մը- նայ Լոնդոնում և Պետերբուրգում, և քաղաքական չըջաններում կարծում են, որ այդ բանը կապ ու- նի Միջին-Ասիայի հարցի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Միւլ-Երբիկ դատարաններից մէկում նորերումս ընկնում էր մի ամուսնական խնդիր: Հարուստ տիկին Սլէտ խնդրում էր բաժանել իրան իր ա- մուսնուց. իսկ պարոն Սլէտ միանգամայն լսել չէր բաժանման մասին չէր կամենում: Տիկինը սնդուկով պնդում է, որ իր մարդու հետ ապրել չէ ուղում, չէ կարող, և երբեք չի համաձայնվի նրա հետ ապրելը չարանակել հետեւալ հիման վրա. նախ՝ որ ինքը տիկին Սլէտ, կարճատես էլ- նեկով՝ ամուսնանալիս չէ կարողացել նկատել իր մարդու մարմնական թուր պակասութիւնները, երկրորդ՝ պարոն Սլէտ սովորութիւն ունի ծնած ժամանակ այնպէս խռխրանքով, որ բողոքովին նման է շողմեքենայի կտորած անիկի ճաճօց- խռխուցից, և որը արդեւում է իրան քնել, եր- րորդ, որ պարոն Սլէտ ոչ մի անգամ չէ համբու- ըել կնոջը, և նոյն իսկ մի անգամ էլ չէ գրկել նրան, և չորրորդ՝ այդ բոլոր պատճառներից զրկված տիկին Սլէտ ատելով իր մարդուն, սիրել է մէկ ուրիշին: Այժմ դատարանին մտած է քնն- նել և վճռել, թէ արդեօք այդ յիշատակված պատճառները բաւական են ապահարդան տալու համար թէ ոչ:

\*\*\*

Մի ճանապարհորդ առիթ ունենալով տեսնել Միայնալ-Նահանգներում գտնվող մի փոքր, սրը իր տեսակի մէջ միակն է, հետեւալ կերպով է նկա- տարարում նրան: Այդ փոքր կոչվում է Վեօր, և գտնվում է Կանդասի հարաւ-արեւմտեան կողմում. ունի 1,000 բնակիչ և կազմում է մի անկախ «Town»: Նա ինքը հրատարակում և գործադրում է իր քաղաքացիական, դատատանական, օսոյա- րական և կրօնական օրէնքները: Գիւղի մէջ չը կան ոչ հիւրանոցներ, ոչ ճաշարաններ, և ոչ էլ հասարակական հիմնարկութիւններ, և ամեն մի օտարերկրացի, որ պատահմամբ ընկնում է Վեօ- րին, այնտեղից հալածվում է: Բացառութիւն տրվեցաւ միայն այն ճանապարհորդի համար, ո- րը գրկել է այս նկարագրութիւնը: Այդ փոքր հիմնված է 1868 թվին մի քանի անձանց ձեռ- ղով այն սկզբունքի վրա, որ ամեն բան ընդ- հանուր պէտք է լինի Տիւրք փոքրիկ փոքրիկ ցածր են, չինված աղակալ և ներսից ոչինչ չըն- դուլիւն և յարմարութիւններ չունեն. կարասիք

չը կայ. յատակի տեղ՝ դեռնին փռած են զանազան կենդանիների մորթիներ, որոնք ծառայում են նստելու համար: Գիւղացիները ընդհանրապէս շատ կոպիտ անք ունեն և անտաշ վարք ու բարք: Նրանց հիմնական օրէնքն է՝ ոչինչ չը գը- նել և ոչինչ չը վաճառել: Ամենքն էլ պարտաւոր են աշխատել վաղ առաւօտից սկսած մինչև մու- թը: Գիւղի կ ա ու վ ա ր ի չ համարվողները (եթէ միայն կառավարիչ թոյլ կը տան դրանց անուա- նել) 12 հոգի են և կոչվում են «խելացիներ»: Նրանք չեն փոփոխվում, և երբ նրանցից մէկը մեռնում է, ընկերները ընտրում են նրա փոխա- րէն մի ուրիշին: Բոլոր վեճերը վճռում են այդ «խելացիները». նրանք են որոշում իւրաքանչիւրի պարտաւորութիւնները, նրանք են բաժանում հոնձը: Վեօրում կայ երեք պահեստ, մէկը սիմիոնի, և ուրիշ աղպիսի բերքերի համար, միւսը գործուածների, և երրորդն էլ խմիչքների համար: Ընտանիք չը կայ. չը կայ և ամուսնու- թիւն: Առաջին հայեացքից երևում է, որ իրերի այդ դրութիւնը պէտք է առաջ բերէր կոխ, և նախանձ,—բայց այդպիսի բան չը կայ: Վեօրի կենսը անցնում է խաղաղ և անընդուն կեր- պով:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Պետերբուրգ, 5 օգոստոսի: «Journal de St. Pé- tersbourg» հաստատելով այն լուրը, թէ Ռուսաս- տանը բողոքել է Կորուրդի պրինցի ընտրութեան և Բոլգարիա դալու դէմ,—ասում է, որ յիշուի չէր կարելի այլ ևս թող տալ, որպէս զի պրինցը ծածկէր իր վարմունքները այն յայտարարութիւ- նով, որ պետութիւնների ընդլիմադրութիւնները վերաբերում են ոչ թէ նրա անձին, այլ ընտրու- թեան ակտի ապօրինի լինելուն: Եթէ պրինցը ա- ւելի լաւ համարեց հետեւ բողոքական քրտնե- րի խորհուրդներին, այդ դէպքում այդ վարմունք- ների վերաբերեալ պատասխանատուութիւնը ամ- բողջապէս իր վրա է ընկնում: Մասնաւոր առն- լով դրանից յետոյ այն լուրի վրա, որ Բ. Գուրը ցանկանում է իմանալ պետութիւնների կարծիքը այն միջոցներին մասին, որոնցով կարելի կը լինի պրինցի առաջ բերած դժուարութիւնների միջ լուր:—Եթեալ լրագիրը նկատում է, որ ոչ մի պե- տութիւն, ինչպէս երևում է, չէ կարող հաւանու- թիւն տալ Բերլինի դաշնագրի խախտելուն, որը և Բ. Գրան պահանջած խորհրդակցութեան նպա- տակն է: Իսկ եթէ պետութիւնները հաւանութիւն կը տան Բերլինի դաշնագրով որոշած իրանց ի- րաւունքը այդպիսի յանդուգն կերպով խախտե- լուն, այն ժամանակ, ի հարկէ, Ռուսաստանը միայնակ չի սրչալտանի այդ դաշնագրի բեկոր- ները: Մի սխալից առաջ էլ գալիս մի ուրիշ սխալ: Սկզբում պրինցը հաւատացնում էր, որ իր Սօֆիա դալը ընդհանուր հանգստութեան նշան կը լինի. —խնամակալութիւնը տեղ կը տայ տեղի չափա- ւոր կառավարութեան և կուսակցութիւնները կը հաշտվեն. սակայն այդ բանը չէր համապատաս- խանում այն անձանց դիտումներին, որոնց են- թարկել էր պրինցը. հէնց որ պրինցը արդէն նո- ցա ձեռքումն էր գտնվում, հաշտ քաղաքականու- թեան հետեղ միսիոնարութիւն և ազատութիւն չնորհելու վերաբերեալ լուրերը դադարեցին, խը- նամակները նորից սկսեցին աստղութեան և վրէժխնդրութեան դրոժը շարունակել. յոգա խոր- հուրը չը տուեցին իրանց թիկնածուին յետ կե- նալ պայտից օրհնութիւն խնդրելուց այն բուլէին, երբ նա պատրաստվում էր ձեռք առնել մի ուղ- դափառ աղբի կառավարութեան զեկը:

ԳԱՐՎՈՒԹ, 5 օգոստոսի: Պրինցը երեկ Տիւրք- լոյից ուղեւորվեցաւ Գարբուլոյի վրայով դէպի Սօ- ֆիա՝ միսիոնարների ուղեկցութեամբ. նախկին խնամակալները մնացին Տիւրքուլոյում:

Պետերբուրգ, 6 օգոստոսի: Համաձայնելով «Norddeutsche Zeitung»-ի դատողութիւնների հետ՝ Կորուրդի պրինցի պրօպագանդի վերաբե- րութեամբ, «Journal de St. Petersburg» ասում է հետեւեալը: «Միւրը համոզված ենք, որ այդպէս կը վերաբերվին դէպի պրինցի գործերու եղանա- կը բոլոր պետութիւնները, որոնք կանչված են հսկելու, որպէս զի անկարգութիւնները և արկածա- խնդրութիւնները մուտք չը գործեն Բոլգարիա, իրերի այն օրինական դրութեան փոխարէն, որով միայն կարելի է ապահովել խաղաղութեան գոր- ծը, որը շատ կարևոր է բոլոր մեծ պետութիւն- ների համար: Կորուրդի պրինցը, ինչպէս երևում է, խոստովանում է, որ ինչից իր բողոք կարգը արդարացի կարգապահութեան հետ. նա այժմ գնում է փութապէս և գլխավոր արկածների շուրջով: Պետերբուրգի գլխուղղական-նախնայա-

